

## ՀԱԿՈՒՄՆԵՐ \*

Դրամա 4 արարուածով

### IV ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

(Մինայի անուանակոչութիւնն է. Բեմը ներկայացնում է՝ զարդարուած առանձնասենեակ, որի յետեւի լալն դռները բաց են եւ երեւում է զոյնզգոյն լապտերներով զարդարուած պարտէզը: Մըկու սեռի հիւրեր, ճոխ հագնուած, զքօսնում են ծառերի տակ: Լսում է շարունակ երաժշտութեան ծայն սիախառնուած հիւրերի խօսակցութեան խուլ աղմուկի հետ: Վարազոյրը բարձրանալիս հիւրերը խմբուած, աղմուկով շնորհատրում են Մինայի անուանակոչութիւնը, փոփոխելով նրա գլխին ծաղիկներ ու կոնֆէտտի):

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՅՆԵՐ. Օրիորդ Նինայի կենացը! Շնորհաւորում ենք! Նրա առողջութեան! կեցցէ յաւէտ օրիորդը!

ՆԻՆԱ. (Շարունակ կրկնում է). Շորհակալ եմ, զգացուած եմ: (Հիւրերը շնորհատրելով զոյգ-զոյգ ցրում են):

ԳԷՈՐԳ. (Մինային). Շնորհաւորում եմ օրուայ հերոսուհուն իմ կողմից առանձին զգացմունքներով: Յոյս ունեւ հետեալ տարին շնորհաւորել քեզ, իբրեւ այլ եւ իմ երջանիկ կնոջ:

ՆԻՆԱ. Երջանիկ, այո կատարեալ երջանիկ քո ընկերակցութեամբ: Յիբաւի՛ դու ինձ սիրում ես, Գէորգ, դու ինձ բաղդաւոր կը դարձնես:

ԳԷՈՐԳ. Տալիս եմ ամենահաստատ խօսք. Դ՛գաւինիր ինձ և ես ոչինչ չեմ խնայիլ քո անդորրութեան:

ՆԻՆԱ. Դու անչափ բարի ես:

ԳԷՈՐԳ. Ամուսնական կեանքում միմիայն բարի լինել

\*) Տես «Լուսայ» № 8.

քաւական չէ, պէտք է ամբողջովին անձնուէր լինել, ստեղծելու մի կատարեալ անդորր կեանք: Պէտք է անհուն ու յաւէտ սիրել իրար, որպէսզի հնարաւոր լինի այդ սիրոյ վրայ մի մաքուր ընտանիք կառուցանել: Ընտանիք, մաքուր ու անբիծ ընտանիք, այս բառի ամենանուրբ իմաստով:

ՆինԱ. Եւ մենք կը կազմենք, Գէորգ:

Գէորգ. Իսկ այս ամենի համար կարեւոր է մաքուր ու հաւատարիմ սէր, որպիսին ես քեզ խոստանում եմ իմ կողմից:

ՆինԱ. Ես ևս նոյնպէս: Միթէ մի ուրիշը քեզ աւելի կարող է սիրել, քան ես:

Գէորգ. Քեզ հաւատում եմ, այլապէս չէի վստահիլ իմ կեանքը քո տրամադրութեան տակ դնել: Առաջի վայրը դու ինձ հետ կը պարեմս:

ՆինԱ. Ի հարկէ, քեզ հետ միայն: Գնում են:

ԼիՄՆՈՐԱ. (Մտնում, նստում է գահատրակին ու սկըսում թերթել նկարների ժողովածու): Նինան ստացել է վերջապէս Գէորգից առաջարկութիւն և այժմ հրճւում է գարնան հորթի պէս: Կարծես նա սիրում է Գէորգին, սակայն անկապած այդ թեթև հրապոյր է միայն, և նա այդ ընտրութիւնը արել է միմիայն զուտ հաշիւների տեսակէտից: Գէորգը հարուստ է և կարող է յապեցում տալ նրա բուրժուա ձգտումներին, կոմպոզտ կեանք ստեղծել նրա համար, ահա ինչու նա թրթռում է Գէորգի շուրջը: Սակայն ճիշտ է և այն, որ ժամանակի ընթացքում նա կը սկսէ սիրել ամուսնուն, որը հարստութեան շնորհիւ կը ստեղծէ կնոջ համար ցանկալի կեանք: Գուցէ: (Թերթում է ժողովածուն): Ահ, Շվէյցարական տեսարաններ: Ալպերը: Ահա Լիւցերն. ահա Ինտերլակեն, Ինզֆրաու: Ահա Շպիտց: Օ', յիշողութիւններ, երազ օրեր, այնքան կենսաւրէց, այնքան սիրուն: (Գլուխը յենում, խորհում է) Ինչէր չեն ասում այս յիշողութիւնները: Մի երկու շաբաթ ևս և ես կըրկին այնտեղ կը լինեմ, նոյն սիրուն ընտրութեան գրկում, նոյն սիրառատ վայրում, Գրիգորին մերձ, այլ ևս իբրև նրա անբաժան ընկերը, նրա կեանքի ընկերը: Օ', ժամանակ...

ԼիՉԱ. (Մտնում է): Դու այստեղ ես. ես քեզ փնտրում էի, հարցնելու քո մասին: Պատմիր խնդրում եմ, քանի ժամանակ ունինք և մեզ չեն խանգարում:

ԼիՄՆՈՐԱ. Պատմելու առանձին ոչինչ ունեմ:

ԼիՉԱ. Ասում ես այսօր Գրիգորից նամակ ունես:

ԼիՄՆՈՐԱ. Այո, մեր մէջ այժմ համաձայնութիւն է կայացած և մենք կ'ամուսնանանք:

ԼԻՉԱ. Բայց ինչո՞ւ նամակով է առաջարկութիւն անում, քանի ընդամենը երկու շաբաթ է, ինչ դու նրա մօտ էիր:

ԼԻՄՆՈՐԱ. Ես կարող եմ քեզ պատմել: Նախ քան հայրենիք դառնալը, մենք, ես և Գրիգորը, մի փոքրիկ ճանապարհորդութիւն կատարեցինք Շվեյցարիայում: (ըսնում է նկարները): Ահա այստեղ, Շպիցցսաւ, նա խօսեց ինձ հետ առաջին անգամ մեր ներքին զգացմունքի մասին և առաջարկութիւն արաւ: Սակայն նախ քան համաձայնութիւնս տալը, ես պարտաւոր էի ծանօթացնել նրան իմ ամբողջ կեանքի հետ:—

ԼԻՉԱ. Ինչպէ՞ս: Միթէ՞ այս երկու տարուայ ընթացքում իրար դեռ ծանօթ չէք:

ԼԻՄՆՈՐԱ. Ներկայ կեանքում իրար շատ լաւ գիտենք, սակայն ես կարևոր էի գտնում նրան ներկայացնել և իմ անցեալ կեանքը:

ԼԻՉԱ. Անցած կեանքը: Կարիք կմյ:

ԼԻՄՆՈՐԱ. Իմ անցած կեանքը, երբ ես վայելել եմ առաջին սէրը:

ԼԻՉԱ. Դու խելագար ես:

ԼԻՄՆՈՐԱ. Այլ կերպ անկարող էի: Չէի կամենում խաբել կամ կեղծել: Թերևս նա հայցում է ինձնից առաջին սէր. միթէ՞ ուրեմն ես պարտաւոր չեմ նկարագրելու նրան իմ անցած կեանքը անկեղծօրէն, նախօրօք պարզելու ամեն թիւրիմացութիւններ ու կասկածանքներ յանուն հենց իմ ապագայն անդորրութեան: Ես չեմ ուզում որ մի գաղտնիք ունենալ իմ և այն էակի մէջ, որ ինձ սիրում է և կամենում իր կեանքը ինձ հետ կապել: Գանիցս կրկնել եմ, որ իմ ամուսնութիւնը իմ վառ սիրոյ անհրաժեշտ սահմանը պիտի լինի, իսկ սիրելով մէկին ես չեմ կարող նրանից գաղտնիք ունենալ: Ես փնդուում եմ կեանքում մի ընկեր, որին յարակցուելով կիսեմ հետը իմ ամբողջ ուրախութիւնն ու դառնութիւնը, առանց որի գիտակցութեան և ոչ մի քալ չանեմ. միշտ նրա հետ, ամեն տեղ նա իմ մէջ, միշտ նա և միմիայն նա: Նրա մէջ պէտք է փնդուեմ իմ միակ երջանկութիւնն ու անդորրութիւն, իսկ ի՞նչ հանգստութիւն, երբ ներքին ձայնը քո մէջ շարունակ պէտք է հնչէ: Թէ այդ ամենը կեղծ է, որովհետեւ ձեր երկուսիդ մէջ գաղտնիք կայ: Թող նախօրօք պարզուի մեր մէջ ամեն անցեալ, ապա թէ սկսենք նոր կեանք:

ԼԻՉԱ. Դու ճառում ես գրքերի աշխարհից, իսկ այդ ոգւորութիւնդ իրական կեանքում քեզ համար շատ մեծ դժբախտութիւններ կը ստեղծէ: Ինչ որ էլ լինի, ամուսինդ պէտք է եր-

բեմն յիշէ, որ դու մի ժամանակ ուրիշին ես ձգտել, իսկ այդ արդէն մի գիտակցութիւն է. որ թռնաւորում է անդորր միտքը և ժամանակից յետոյ ատելութիւն առաջ բերում:

ԼԻՈՆՈՐԱ. Իսկ ես ընդհակառակը կարծում եմ կատարեալ երջանկութեան համար անհրաժեշտ է մտքերի պարզումն, այլապէս չար կասկածը գաղտնի կերպով կը կրծէ երկուսի ուղեղը: Թող ինձ սիրող մարդը իմանայ իմ կեանքի պատմութիւնը, թող իմանայ որ ես մի անգամ արդէն սիրել եմ, թէկուզ մանկական, սակայն անհուն զգացմունքով. թող իմանայ, որ ես անցել եմ արդէն փորձութեան այդ բովով և որ այժմ ես ոտք եմ դնում գիտակցական սիրոյ շրջանում, երբ այլ ևս ամեն ինչ դրական ու հաւատարիմ արտայայտութիւն կը լինի: Թող նա հաշուի առնէ այս ամենը, ապա թէ ձեռք մէկնէ ինձ վստահ որ իր սիրած էակը խուսափում է ամեն տեսակ կեղծիքից, որպէս թռնաւոր գնդակից:

ԼԻԶԱ. Սակայն դրանով չի վերջանում ձեր միջի գաղտնիքները, քանի որ նրա անցած կեանքը մնում է քեզ մութ:

ԼԻՈՆՈՐԱ. Նրա անցած կեանքը անշուշտ ցածր է կանգնած իմից իբրև ժամանակակից երիտասարդի: Սակայն ես խուսափում եմ կանգ առնել դրա վրայ, ինչքան էլ ցաւ է պատճառում ինձ այդ: Խուսափում եմ, որովհետև ժամանակակից հասարակական պայմանները տալիս են տղամարդուն արտօնութիւններ, իրաւունք կնոջ վրայ: Իսկ մեր ստացած կրթութիւնը բնութիւնից կրած դրոշմը, ստիպում են մեզ խոնարհուել տղամարդու առջև, խոնարհուել գոյութեան կուռում, թէկուզ իբրև թոյլ ուժեղի առջև, որի խնամակալ հսկողութեան կարիք ունենք մենք: Մի բոպէ սարսափում ենք՝ այն մտքերի տակ, որ չենք օգտւում նոյն առաւելութիւններից, որոնցով զարդարուած է տղամարդը, դրա հետ հանդերձ սակայն, մի հզօր քաղցրութիւն ենք զգում տղամարդու հրամայող, կարգադրիչ ձայնի տակ և ուրախութեամբ ձգտում կաշելու նրա կրծքին, իբրև մեղմից աւելի արտօնեալի, աւելի ուժեղի ու բարձրի:

ԼԻԶԱ. Բայց այս դէպքում դու հօ կարող ես նոյն տեսակի հաւատարմութիւն, անկեղծութիւն պահանջելու քո ընտրածից: Ճիշտ ես ասում, մեր ներկայ պայմանները մի տեսակ նախապաշարմունք են մեզ ներազդել տղամարդու վրայ իրաւունքներ չը բանեցնել, սակայն քո այդ ազնիւ քայլը կը դըրդէր անշուշտ Գրիգորին նոյն մաքրութեամբ ձեռք մեկնելու քեզ: ԼԻՈՆՈՐԱ. Եւ ես արժանացել իմ այսօր այդ փոխա-

դարձ պատուին, դրա հետ հանդերձ սահման է դրուած մեր անցեալին և մենք կապուեալ ենք այժմ ապագայ հաւատարմութեամբ:

ԼԻԶԱ. Նախանձում եմ քեզ, Լիոնորա, այդ մտքերիդ համար: Դո՛ւ այդ պատուարեր քայլը բարձրացնում է կնոջ վարքը և թող որ տղամարդիկ կարմրեն թոյլ կնոջ այս գերազանց քայլից: Քեզ շնորհաւորում եմ, Լիոնորա: Դու սովորեցրիր, ներշնչեցիր ինձ գիտակցաբար վերաբերուել գոյութեան և ես ասում եմ քեզ, որ այս բոլորից սկսած ես այլ մարդ եմ և կապւեմ այլ մտքերով:

ԼԻՄՆՈՐԱ. Որ դու ընդունակ ես նոյնպիսի գիտակցութեան ու բարձրութեան վրայ ապրելու, ես չեմ կասկածում, զարմանքով նկատում էի միայն, որ այս երկու տարում քո դրական միտումները կարծես տեղի են տուել կեղեկային քաղաքակրթութեան:

ԼԻԶԱ. Կեանքը, ընկեր, կեանքը: Այս երկու տարին, քեզնից բաժան, ես ոչ այլ ինչ էի, քան միայն սալոնի զարդ, կամ աւելի ճիշտ է ասել, իբրեւ միայն հարուստ ու գեղեցիկ հարսնացու:

ԼԻՄՆՈՐԱ. Հասկանում եմ, ցաւ ի սիրտ ըմբռնում այդ ամենը: Սակայն թողնենք անցեալը և նոր կեանքում օրինակելի ընտանիք կազմենք, կատարելով մեզ վրայ վերցրած պարտականութիւնները ամենայն իսկութեամբ:

ՆԻՆԱ. (Մտնում է): Այս հւր էք. խոստովանուելու ժամանակ էք գտել:

ԼԻԶԱ. Սօսում ենք:

ՆԻՆԱ. Մի մոռանաք, որ հիւրերին զբաղեցելու մեծ պարտականութիւն ունէք: Եկէք խնդրեմ:

ՄԻՔԱՅԵԼ. (Մտնում է): Այս հւր ես էլզա:

ՆԻՆԱ. Զրուցելու արտակարգ տրամադրութիւն են ստացել: Վերցրէք բերէք: (Լիոնորայի հետ գնում են):

ԼԻԶԱ. Սօսում էինք Լիոնորայի հետ: Նա անչափ ազնիւ էակ է:

ՄԻՔԱՅԵԼ. Ես քեզ յաճախ շեշտել եմ նրա համեստութեան մասին:

ԳԷՈՐԳ. Ե՛ի ՀԵՆՐԻԿ. (Մտնում են):

ԼԻԶԱ. Ես քեզ նրա աւելի բարձր յատկութիւնների մասին կը պատմեմ, միայն ոչ այժմ, սրանց ներկայութեան:

ՄԻՔԱՅԵԼ. Այժմ գնանք դահլիճ:

ԼԻԶԱ. Գնանք: (Գնում են):

ԳԷՈՐԳ. Ես կամենում եմ իմանալ, ինչպէս վերջացրիր

Միքայելի հետ: Միթէ չը կարողացար համոզել նրան թողնել այդ օրիորդին:

ՀենՐիկ. Սօսեցի, պնդեցի, իսկ հետեանքը եղաւ այն, որ նա մերժեց իմ ծանօթութիւնը:

ԳէՈՐԳ. Այդ արդէն աններելի կամակորուրթիւն է: Յիրաւի՞ նա չէ զգում այդ քայլի մէջ անազնուութիւն, պատասխանատուութիւն:

ՀենՐիկ. Նա շատ լաւ գիտակցում է ամեն չարիք, սակայն էլ զային տիրանալու փափագը խեղդում է ամեն առողջ բանականութիւն նրա մէջ: Նա սիրում է այդ էակին և յաճախ այդ սիրոյ ձեռք է մեկնում սրբապղծելու այդ մաքուր կոյսին: Նա գիտակցում է այս ամենը, սակայն սեպհական երջանկութեան դէմ կանգնել չի ցանկանում, գուցէ և անկարող է ԳէՈՐԳ. Ի՞նչ երջանկութիւն, երբ ամբողջ կեանքը անբուժելի ցաւերի շրջանում պէտք է անցնէ: Ի՞նչ յարգանք կամ սէր կարող է տածել նրան իր կիսը:

ՀենՐիկ. Ես շեշտեցի նրան գոնէ նախօրօք խօսել օրիորդի հետ, քանի նա կողմնակի աղբիւրներից ոչինչ չի լսել, բայց նորից մերժեց, պտտառաքանելով, որ սիրած էակի առջև բարոյապէս մերկանալ չի կամենում:

ԳէՈՐԳ. Հասկանալի է: Եւ դու մտադիր ես այժմ խօսել օրորդի հետ:

ՀենՐիկ. Կարևոր է իրերի դրութիւնը պարզել, յանուն հենց նրանց երկուսի բախտաւորութեան, սակայն դժուարանում եմ այս կանացի դերի մէջ մտնել:

ԳէՈՐԳ. Ես կարծում եմ օրիորդը որտեղից որ է կը լսէ: ՆիՆԱ. (Մտնում է): Պարոններին դահլիճ է խնդրում: Ինչպէս երևում է այս երեկոյ ես շարունակ ստիպուած պիտի լինեմ ցրուած հիւրերին խմբել:

ՀենՐիկ. Ներէք, օրիորդ Նինա. կարևոր խօսակցութիւն էր:

ԳէՈՐԳ. (Նինային մի կողմ՝ ընդելով): Գիտես, քեզ պէտք է մի լուրջ խնդրի մասին յայտնեմ:—

ՆինԱ. (Շփոթուած): Ի՞նչ:

ԳէՈՐԳ. Հարցը Միքայելին է վերաբերում: Նա հիւանդ է և անյարմար է գտնուում նրա ամուսնութիւնը:

ՆինԱ. Բեկմատիզմի պատճառով միայն:

ԳէՈՐԳ. Ո՛չ: Այդ մի հարցն էր: Կարևոր է միայն էլ զային հասկացնել, որ նա խօսէ Միքայելի հետ ու պահանջէ պարզել իրերի դրութիւնը: Հենրիկ փորձել է համոզել Միքայելին յետ կանգնել, բայց չի յաջողուել:

ՆԻՆԱ. Հմա: Բայց այդ ինչպէս հիւանդ... Լաւ, ես կը խօսեմ էլզայի հետ, այժմ գնանք: (Քաշում է Թելից): Գնանք, պարոն Հենրիկ: (Քայլում են դուրս գնալու, մտնում է Լիոնորան, Նինան նրա Թելից քաշում, բերում է բնմի առջեւ, իսկ պարոնները խօսելով գնում են):

ԼԻՄՆՈՐԱ. Ի՞նչ ունեւ:

ՆԻՆԱ. Դու չիմացար արդեօք ինչու երեկ Միքայէլն ու Հենրիկը վիճել են:

ԼԻՄՆՈՐԱ. Էլզան հարցրել է, Միքայէլը հրաժարուել է պատասխանել:

ՆԻՆԱ. Ես այժմ գիտեմ: Միքայէլը հիւանդ է և նրան արգելում է ամուսնանալ:

ԼԻՄՆՈՐԱ. Ամա: Ուրեմն Միքայէլը զոհում է էլզային իր չարամտութեան, անուանելով այդ սէր:

ՆԻՆԱ. Սէր, այո: Հըմ:

ԼԻՄՆՈՐԱ. Թող հեգնել: Այսպիսի բոլորներին այդ աւելի ջղային է դարձնում:

(Գէորգ եւ Հենրիկ վերադառնում են խօսելով):

ՆԻՆԱ. Ի՞նչ անել այժմ, ի՞նչ ես կարծում:

ԼԻՄՆՈՐԱ. Իսկոյն կը խօսեմ էլզայի հետ: (Քայլում են գնալու):

ԼԻԶԱ. (Մտնում է Միքայէլի հետ): Մեզ դահլիճ ես ուղարկում, իսկ դու այստեղ զրուցում:

ՆԻՆԱ. Նորոգութիւն եմ խնդրում: Այժմ գնանք բոլորս միասին:

ԼԻԶԱ. Մի քանի բոլոր, խնդրում եմ. քանի այստեղ խրմբուել, ծանօթների լաւ շրջան ենք կազմում, ես կամենում եմ մի հարց տալ, մեզ ամենքիս շատ մերձ մի հարց:

ԳԷՈՐԳ. Հետաքրքիր է:

ՆԻՆԱ. Նշանուած զոյգերը գիտե՞ր անելու մեծ տրամադրութիւն ունին միշտ:

ԼԻԶԱ. Ոչ գիտ, սակայն նշանակութիւն ունեցող մի հարց: Կարեւոր է արդեօք ամուսնացող զոյգին իրանց անցեալի նկարագրութիւնը ներկայացնել փոխադարձաբար:

ՆԻՆԱ. Տղամարդկանց աւելի կարմրացնելու նպատակով:

ԼԻԶԱ. Նո՛ւ, նո՛ւ:

ԼԻՄՆՈՐԱ. Խիստ ես ակնարկում:

ԳԷՈՐԳ. Կան խնդիրներ, որոնց պարզելը անպայման անհրաժեշտ է: (Միքայէլ անհանգստաբար սուլում, չորս կողմն է դիտում, աշխատելով անուշադիր մնալ):

ԼԻՄՆՈՐԱ, Ինչո՞ւ ոչ ամբողջ անցեալը:

ԳԵՈՐԳ. Անցեալը կարող է պարունակել պատմութիւններ որոնք իբրեւ անգիտակցականութեան հետեւանքներ, կուլ են դնացել արդէն ժամանակի ալիքներին: Կարող են պատահած լինել և դէպքեր, որոնք չեն կարող խարակտրիստիքական նշանակութիւն ունենալ ապագայի համար: Դրա փոխարէն կան գաղտնիքներ, որոնց պարզումը կը թունաւորէ ապագայ ամուսնութեան անդորրութիւնը: Բաւական պէտք է համարել, երբ ամուսնացող զոյգը գիտակցութեամբ է ոտք դնում նոր ճանապարհին, ուր և կորչում է անցեալը:

ԼԻՄՆՈՐԱ. Իմ խորագոյն համոզմունքն է ընտանեկան կեանքում ոչ մի գաղտնիք չունենալ ինչպէս ներկայում, նոյնպէս և անցեալի վերաբերմամբ, այլապէս չի լինի ոչ մի անկեղծութիւն, իսկ այս մի սահման է, երբ երկուսն էլ ապրում են ծայրահեղ զգոյշ, մի գուցէ դիպուածօրէն պատուով քօղը: Գաղտնիքը թիւրիմացութիւնների ահագին աղբիւր է և հանգչում է ամենամեծ դժբաղդութեամբ:

ՀԵՆՐԻԿ. Ոչ մի գաղտնիք սիրոյ մէջ, շեշտում եմ ես: Ես ձեռ եմ մեկնում իմ սիրած էակին ոչ նրա անցեալի համար, այլ ապագայ երջանկութեան նպատակով: Մենք նախ մաքրում ենք անցեալը, ապա սկսում նոր գիտակցական կեանք, փոխադարձ հաւատարմութեամբ, միշտ վստահ, որ անցեալից որևէ սպառնացող վտանգ չը կայ:

ԳԵՈՐԳ. Անպայման կարևոր է նախապէս պարզել այն ամեն դրութիւնները, որոնք կարող են երեւիցէ բռնկուել ու վտանգ սպառնալ: Մակայն ես խօսում եմ այն չնչին անցեալի մասին, որ այսպէս թէ այնպէս մի անգամ եղել է, այժմ մոռացուել և ապագայում չի կարող կրկնուել:

ԼԻԶԱ. Պարզել բոլոր անցեալը, կարծում եմ ես, ինչքան էլ այդ անցեալը ապագայի վերաբերմամբ աննշան լինի: Ինչո՞ւ օրինակ գաղտնի պահել այն, որ նախ քան ամուսնանալը սիրել ու սիրուել ես: Չէ՞ որ այս նշանակում է խաբել, կարծել, տալով դիմացնիդ, թէ ոտք ես դնում առաջի սիրոյ շէմքին: Այս կեղծիք է, ուրեմն և չը պիտի լինի:

ԳԵՈՐԳ. Բրավօ. գովասանքի արժանի:

ՆԻՆԱ. Այս ամենը շատ աւելորդ խօսակցութիւններ են այս երեկոյեան համար:

ԼԻԶԱ. Ոչ աւելորդ: Ահա մեր դիմաց կանգնած ունենք մի այսպիսի ագնիւ էակ, Լիոնորան, որ կատարեալ այսպէս է վարուել, նախ նկարագրելով սիրած էակին իր անցեալը, ապա

Թէ ընդունելով նրա առաջարկութիւնը: Եւ մենք կարող ենք այժմ նրան շնորհաւորել:

ՆԻՆԱ. Ի՞նչ. դու ամուսնանում ես. և ես չը գիտէի այդ: ՁԱՅՆԵՐ. Շնորհաւորում ենք:

ՆԻՆԱ. Այժմ զնանք, պարոններ, (Մինա եւ Դէորգ, Հենրիկ եւ Լիոնորա զնում են):

ԼԻՉԱ. Ինչո՞ւ դու ոչինչ չես խօսում, Ի՞նչ որ վատ տրամադրութիւն եմ նկատում քո մէջ:

ՄԻՔԱՅԷԼ. Այդ բժշկին ես այլ ևս տանել չեմ կարող, իսկ դու ընդհակառակը աշխատում ես նրան խօսակցութեան հրաւիրել:

ԼԻՉԱ. Ուրեմն ես ևս ընդհատեմ նրա հետ յարաբերութիւնս:

ՄԻՔԱՅԷԼ. Այդ քո սեպհական գործն է, ես չեմ պահանջում, բայց ինչո՞ւ հենց այստեղ առաջարկել մի այդպիսի հարց:

ԼԻՉԱ. Միթէ՞ քեզ հաճելի չէր լինիլ, որ քո սիրած էակը ևս այդպէս անկեղծ ու հաւատարիմ վերաբերուէր քեզ:

ՄԻՔԱՅԷԼ. Այդտեղ ես մի առանձին իդէալականութիւն չեմ տեսնում, ընդհակառակը ապագայ դժգոհութիւնների նիւթ, առատ նիւթ: Ինչի՞ս են պէտք քո անցեալը. դու այժմ ինձ սիրում ես և խօսք ես տալիս հաւատարիմ սիրել, ինչո՞ւ ուրեմն նորից քննել անցեալը: Չէ՞ որ ինչքան էլ օբյեկտիւ վերաբերուեմ, այնուամենայնիւ քո նախկին սիրոյ պատմութիւնը կարող է ինձ տհաճոյթներ պատճառել, երբեմն-երբեմն զրգուել: Այդ ամենը աւելորդ ճշմարտասիրութիւններ են:

ԼԻՉԱ. Սակայն անչափ կարևոր ընտանեկան համաձայնութեան ու հաւատարմութեան համար: Այն կապը կամ համաձայնութիւնը, որ կայացած է կեղծիքների ու անճշտութիւնների վրայ, շուտ թէ ուշ կը խախտուի: Ինչո՞ւ ներկայանալ իբրեւ հրեշտակ. երբ ամենասովորական մարդ ենք:

ՄԻՔԱՅԷԼ. Մի ներկայանալ իբրեւ հրեշտակ. բայց և մի մերկանալ այնպէս, որ պատիւդ աւերէ: Կայ և մի այլ մօրալ: Ի՞նչ իրաւունքով դու կամենում ես հաղորդել մի գաղտնիք, ուր մաս ունի քեզնից բացի և այլ անձնաւորութիւն: Մի գաղտնիք, որ այդ երկրորդ անձնաւորութեան ամենանուրբ զգացմունքն է թերեւ շօշափում, մի գաղտնիք, որ գուցէ նրա սրբութիւն սրբոցն է:

ԼԻՉԱ. Իմ ապագայ երջանկութեան համար, զանազան թիւրիմացութիւններից խուսափելու նպատակով, ես կարևոր եմ համարում պարզել ինձ վերաբերող բոլոր խնդիրներն ու պատմութիւնները:

ՄԻՔԱՅԷԼ. Ես կատարեալ այլ կարծիքի եմ, սակայն այստեղ երկար խօսել անյարմար եմ գտնում: Կասեմ միայն իմ վերաբերմամբ, որ ինձ չի հետաքրքրում ամենևինքն քո անցեալը միայն թէ վստահելի խօսք տաս, որ ինձ սիրում ես և կը մընաս փոխադարձ հաւատարմութեամբ:

ԼԻԶԱ. Ես քեզ սիրում եմ և տուել եմ իմ հաստատ խօսքը:

ՄԻՔԱՅԷԼ. Այդ է ինձ կարևոր և ես կապրեմ հանգիստ: Շնորհակալ եմ Գնանք, (Վերցնում է թելը եւ գնում են):

ՀԵՆՐԻԿ. (Մտնում է քիչ յետոյ): Գէորգն առաջարկուեթիւն է արել և Նինան ընդունել է: Գէորգը սիրում է, իսկ Նինան... Թերեւ. սակայն այսպէս թէ այնպէս նրանց մէջ համաձայնութիւն է կայացել և կամուսնանան շուտով: Իսկ Թս... Նինայից մերժուած՝ ես կը մնամ Գէորգի ընտանիքի ամենամօտ բարեկամը, եթէ միայն այս ամենից յետոյ ես կարող եմ առանց կարմրելու Գէորգին նայել: Եթէ Լիոնորան, այդ ազնիւ աղջիկը, կարևոր է գտնում ընտանեկան անդորրութեան համար անկեղծ ճշարտութիւն, ընկերական բարեկամութեան համար դա կրկնակի անհրաժեշտ է: Ինձ վրայ պարտականութիւն կայ իմ և Գէորգի բարեկամութեան միջև ոչինչ կեղծիք, գաղտնիք չունենալ: Նինան պարտաւոր է ամեն ինչ պարզել նրան, ես այդ կը պահանջեմ:

ԼԻՈՆՈՐԱ. (Մտնում է): Էլզան այստեղ չէ:

ՀԵՆՐԻԿ. Գնացին այսպէս:

ԼԻՈՆՈՐԱ. (Գնում է ցոյց տուած ուղղութեամբ):

ՀԵՆՐԻԿ. Ես փորձեմ Նինայի հետ խօսել: Կարևոր է Գէորգին պարզել նախապէս մեր մէջ տեղի ունեցած յարաբերութիւնը: (Գնում է):

(ԼԻԶԱ. Եւ ԼԻՈՆՈՐԱ մտնում են հակառակ կողմից):

ԼԻՈՆՈՐԱ. Ես քեզ փնդուում էի: Աշխատիր Միքայէլից հարցնել Հենրիկի հետ ունեցած վէճի մասին:

ԼԻԶԱ, Ոչինչ խօսել կամ լսել Հենրիկի մօտին չի կամենում: Բայց ի՞նչ կայ որ: Կարե՞ր է:

ԼԻՈՆՈՐԱ. Քեզ համար անչափ կարևոր:

ԼԻԶԱ. Ես անհանգստանում եմ: Ասիւր, ի՞նչ կայ:

ԼԻՈՆՈՐԱ. Նա հիւանդ է, Էլզա, հիւանդ. հասկանում ես:

ԼԻԶԱ. Ինչ... ? !

ԼԻՈՆՈՐԱ. Խօսիւր հետը և պահանջիր ապահովաթուղթ:

ԼԻԶԱ. Լիոնորա, մի մոռանար որ ես նրան անսահման սիրում եմ, ուրեմն և նրա հիւանդութիւնը ինձ չի զարհուրեցնիլ, ընդհակառակը ես այդ դէպքում աւելի քան կարևոր եմ նրան:

ԼԻՈՆՈՐԱ. Սիրիւր նրան, խնամիր նրան ընդ միշտ իբրև նրա ամենամտերիւմ ընկերը, սակայն նրա կենը... մի լինիր:

ԼԻԶԱ. Նժու... ? !

ԼԻՈՆՈՐԱ. ? !

ԼԻԶԱ. Զարախօսութիւն չէ՞ այդ արդեօք:

ԼԻՈՆՈՐԱ. Սպասում ես Հենրիկից: Սակայն ամենից նպատակայարմար անձամբ խօսել: Փորձիր:

ԼԻԶԱ. Ա՛խ. ինչքան տանջանք: Գնանք, այստեղ է: (Դընում են):

ՄԻՔԱՅԷԼ. (Մտնում է հակառակ կողմից փոքր պատու-զայից յետոյ): Ուղեղս ծանր է, խիղճս անմաքուր: Ի՞նչ անեմ ես: Ամուսնութիւնը իմ ուղեղին մատչելի չի եղել երբէք, սակայն մի դէպք, մի բարի հանդիպում փշրեց ամեն վճիռ ու կամք իմ մէջ: Էլզայի հանդիպումը, նրա առաջի հայեացքը շանթից միտքս և ես գերի եմ այլ ևս: Ներքին աննախանձելի կռիւլ իմ մէջ երկար էր ու տանջալից, մինչև զգացմունքը իմ մէջ յաղթանակ ձեռք բերաւ բանականութեանս վրայ, ապա հարազատ ականջներովս լսեցի այն անոյշ ձայնը, որ երգում էր, «ես քեզ մերժել չեմ կարող, Միքայէլ»: Այս ամենից յետոյ միթէ՞ նորից տատանուել: Ո՛չ, ես այլ ևս անոյժ եմ խեղդելու իմ զգացմունքը, որ այժմ կատարեալ տիրում է կամքիս վրայ: Ո՛չ, ես նրանից խոյս տալ չեմ կարող: Թո՛ղ լինի, ինչ պատահելու է: Այս ճանապարհին կամ կը վերականգնեմ կորցրածս, կամ թէ բոլորովին կը տապալուեմ. և այս կրկնակի հարուածի տակ հազիւ թէ մի գնդակ արժանի չը համարուի իմ ալլա-մեռուած դոյութեան. այսքան քաջութիւն այս աստիճան ազ-նիւ արիւթիւն ես չունենամ:

ԼԻԶԱ. (Մտնում է Լիոնորայի հետ): Միքայէլ, դու տխուր ես և խիստ դժգոհ. միթէ՞ ինձնից որևէ գաղտնիք ունես:

ՄԻՔԱՅԷԼ. Ես փոքր ինչ ջղային եմ, բայց քո անոյշ ձայնի դիմաց ես հաւ կրկնակի երջանիկ եմ:

ԼԻԶԱ. Ես հաւատում եմ, որ դու խոր համակրանք ես տածում ինձ, հենց յանուն այդ զգացմունքի խնդրում եմ պարզել ինձ քո այս տխրութեան պատճառը, ինչպէս և ասել, ինչի՞ առթիւ վիճել ես Հենրիկի հետ:

ՄԻՔԱՅԷԼ. Միթէ՞ այդ քեզ անհամբատացնում է:

ԼԻԶԱ. Թերեւս ոչ, եթէ միայն մի չար նախազգացում չը կրճէր ուղեղս:

ՄԻՔԱՅԷԼ. Ես քեզ երաշխաւորել կարող եմ:

ԼԻԶԱ. Անպայման, ես քեզ հաւատում եմ, որովհետեւ անսահման սիրում եմ քեզ: Սակայն յանուն մեր ապագայ անդորրութեան, աղերսում եմ քեզ, Միքայէլ, ոչինչ չը թաղցնել ինձնից: Դու ազնիւ մարդ ես և յանուն իմ սիրոյ կանես այդ: Զէ: Դու լռում ես: Ինչո՞ւ, Միքայէլ. այդ դժուար է քեզ:

ՄԻՔԱՅԷԼ. Ձեռ հասկանում ինչո՞ւ դու այսչափ յամառում ես: Ես քեզ սիրում եմ ամբողջ հոգով, մի մոռանար այս: Վստահիր ինձ և ես քեզ երջանիկ կը դարձնեմ:

ԼԻԶԱ. Բախտաւոր եմ այդ լսել, Միքայէլ. սակայն թերեւ լինին առիթներ, որոնք խոչնդոտ հանգիստանան մեր երջանկութեան. ինչո՞ւ ուրեմն նախօրօք չը նախապատրաստուել ամեն դժբախտութեան:

ՄԻՔԱՅԷԼ. Դժբախտութեան:

ԼԻԶԱ. Ձը գիտեմ, կասկածում եմ միայն. դու պարտաւոր ես ամեն ինչ ինձ պատմել: Ի՞նչ կայ քո և Հենրիկի մէջ:

ՄԻՔԱՅԷԼ. Այդ մասին ինձ հաճելի է լռել:

ԼԻԶԱ. Այդ դէպքում մնում է ինձ ասել:

ՄԻՔԱՅԷԼ. (Գ!):

ԼԻԶԱ. Քեզ արդելում է ամուսնանալ:

ՄԻՔԱՅԷԼ. Ա՛հ, թշուառ: (Ճակատը տրորում, ընկնում է գահաւորակիմ):

ԼԻԶԱ. Ինչո՞ւ յուսահատուել, Միքայէլ: Դու կարծում ես այն աստիճան ես փոքրոգի եմ, որ այս դէպքում կը թողնեմ քեզ: Ո՛չ. ես քեզ այժմ աւելի, քան երբ և է կարեւոր եմ: Թերեւ իմ սիրոյ շնչի տակ հնարաւոր լինի քեզ աւելի շուտ բժշկուել: Ապաւինիր ինձ քո ցաւը:

ՄԻՔԱՅԷԼ. Ա՛խ, էլզա, անսման էակ, ինչո՞ւ քեզ պատահեցի:

ԼԻԶԱ. Մի հառաչիր. ապաւինիր քեզ այսչափ սիրոյ էակին և ես կը բժշկեմ քեզ:

ՄԻՔԱՅԷԼ. Է՛լզա, կաթոգին սէր, ես անբոյժ եմ և կորած եմ:

ԼԻԶԱ. Այդպէս մի խօսիր, Միքայէլ:

ՄԻՔԱՅԷԼ. Ա՛խ, եթէ միայն հնարաւոր լինէր վերադարձնել վատնածս:

ԼԻԶԱ. Միթէ՞ ես չեմ կարող քեզ երջանիկ դարձնել:

ՄԻՔԱՅԷԼ. Անկասկած դու կարող ես, սակայն փոխադարձաբար կը ստանան ինձնից:

ԼԻԶԱ. Միթէ ինձ չես սիրում:

ՄԻՔԱՅԷԼ. Աւել, քան մարդկային զգացմունքը կարող է:

ԼԻԶԱ. Ուրեմն...

ՄԻՔԱՅԷԼ. Ա՛խ, է՛լզա: (Պառուզա), Հեռու: (Հըում կանգնում է): Դհու...

ԼԻԶԱ. Միքայէլ: (Մերձենում է):

ՄԻՔԱՅԷԼ. (Նուսափելով). Ո՛հ, Մենք պէտք է գատուենք:

ԼԻԶԱ. Միքայէլ—

ՄԻՔԱՅԷԼ. Այլապէս ես քեզ կը սրբապղծեմ: Այս էր ահա պահանջում բոլորիկ Հենրիկը: Ես ատում եմ նրան այժմ աւելի, քան երբէք: Ա՛խ (Ընկնում է ընկճված ու մէջ):

ԼԻԶԱ. Միքայէլ, միթէ՞ իմ դիմաց գոռւ եմ քեզ այդ աստիճան յուսահատ: Արիացիր: Ես կը մնամ քեզնից անբաժան մինչև առողջանաս, մինչև ձեռք բերես կորցրածդ:

ՄԻՔԱՅԷԼ. Ձեռք բերել: Դհու, անմեղ կոյս, դու դեռ յուսում ես: Գո ձայնը դեռ այդպէս սփոփի՛չ է հնչում: Թող ինձ ու գնա քո բաղդին. ես կորած եմ անդամ: Դու կը սրբապղծուես իմ ընկերակցութեամբ. գնա, փախուսա տուր, քանի որ ես չեմ:

ԼԻԶԱ. Քեզ թողնել չեմ կարող, Միքայէլ:

ՄԻՔԱՅԷԼ. Դու պարտաւոր ես ինձ թողնել. պարտաւոր ես յանուն մեր պատուի, յանուն մեր բարոյականութեան: Մինչ այժմ ես անոյծ էի սանձ դնելու իմ սիրոյ զգացմունքին. սակայն բանականութեան ձայնը այժմ իմ մէջ աւելի քան ուժեղ է հնչում: Մենք պէտք է բաժանուենք. դու պէտք է ինձ թողնես: Ես ունեմ իմ ներսը մի գարշելի ախտ, որ կարող է քեզ վարակել, ալլասեռել քո սերունդը, աւերել քո անբիծ պատիւը: Գնա, գնա, ինձնից: (Քայլում է դէպի դուռը): Ես հասարակութեան մի պատուազուրկ անդամ եմ, իսկ դու մի մաքուր կոյս: Գնա հեռու. ապրի՛ր հեռու (Գնում է):

ԼԻԶԱ. (Ընկնում, լալիս է): Ա՛հ, Լիոնորա:

ԼԻՄՆՈՐԱ. Միթարուի՛ր, էլզա: Դու կորցնում ես սիրածըդ, բայց գտնում բարոյական պատիւդ: Չարիքից փոքրագոյնը պէտք է գերադասել: Հանգստացի՛ր, սթափուի՛ր:

ՆԻՆԱ. (Մտնում է): Այս քնի է:

ԼԻՄՆՈՐԱ. Միքայէլը խոստովանուեց:

ՆԻՆԱ. Յիրաւի՞ նա հիւանդ է:

ԼԻՄՆՈՐԱ. Դժբախտաբար:

ՀԵՆՐԻԿ. (Մտնում է):

ՆԻՆԱ. (Հենրիկին ընդառաջ). Միքայէլն ազնուաբար խոստովանուել է:

ՀԵՆՐԻԿ. Նա կատարել է իր պարտը: Սպասում էի:

ՆԻՆԱ. Բայց հանգստացի՛ր էլզա: Հիւրերը խնայն կը

խմբուհն այստեղ, գնանք իմ առանձնասենեակը: (Օգնում է Լիոնորայի հետ Էլզայի՛ն բարձրացնելու, ապա քայլում են գնալու):

ՀենՆՐիկ. Կարո՞ղ է օրիորդ Նինան մի երկու բնակիչ հետ մնալ:

ՆինԱ. Դուք այնքան բարի եք, որ կարելի է ձեզ վստահել:

(Լիոնորան Էլզայի թեւը վերցրած գնում են):

ՀենՆՐիկ. Շնորհակալ եմ Մենք խոստացել ենք հաշտ ապրել, իսկ կատարելաբար երեկամութեան համար անկեղծութիւնը կրկնակի անհրաժեշտ է: Ես, իբրև Գէորգի ընկերը, նրա բնական իրաւունքները, կամենում եմ հարցնել ձեզ, օրիորդ Նինա, գիտե՞ք արդեօք Գէորգը մեր մէջ տեղի ունեցած պատմութեան մասին:

ՆինԱ. Նա չը պէտք է իմանայ. յոյս ունեմ դուք ոչինչ չէք խօսել:

ՀենՆՐիկ. Ոչինչ: Բայց դուք չէ՞ք մտածում խօսել:

ՆինԱ. Ի՞նչ էք ասում: Խելագար հօ չեմ:

ՀենՆՐիկ. Այդ անհրաժեշտ չէ՞ք գտնում:

ՆինԱ. Աւելի քան անհրաժեշտ է լուր: Ես վստահ եմ ձեր ազնւութեան և չեմ ուզում կարծել, որ երբ և է ընդունակ կը լինիք օգտուելու որ և է ստոր զէնքից:

ՀենՆՐիկ. Իրաւացի էք, ես ստոր զէնքից օգտուելու ամենին ընդունակ չեմ, միայն կամենում եմ ձեզ յիշեցնել այդ պարտականութեան մասին, այսինքն պատմել նրան քոյր միջադէպը, ազատելու կեղծ դրութիւնից նախ ձեզ, ապա ինձ:

ՆինԱ. Ձեր ուղեղը կանոնաւոր է գործում:

ՀենՆՐիկ. Աւելի պայծառ ու կանոնաւոր:

ՆինԱ. Գիտէի ու սպասում էի, որ դուք յարմար դէպքերին միշտ կաշխատէք օգտուել մյն միջոցներով, որ ձեռք էք բերել յանուն իմ սիրոյ: Սպասում էի, այո:

ՀենՆՐիկ. Օրիորդ Նինա, այդ ազնիւ պարտք է, որ ձեզ կատարել եմ խնդրում:

ՆինԱ. Հրձ. ազնիւ պարտք: Կը կատարէ՞ք այդ ազնիւ պարտքը դուք ձեր ամուսնու վերաբերմամբ:

ՀենՆՐիկ. Առանց թեթև տատանման: Ես շեշտում եմ ձեզ այդ անհրաժեշտութեան մասին:

ՆինԱ. Մարդիկ ստոր են, այո, իսկ դուք, ազնւութեան մասին ճառողներդ աւելի քան ցածր: Արեք, ինչ կուզէք:

ՀենՆՐիկ. Ես խնդրում եմ ազատել ինձ այդ դերից:

Լուսալ

ՆԻՆԱ. Այդ տեսակ յիմար պարտականութիւն, ինձ վրայ  
տոնել ես չեմ կարող, չեմ ուզում և ծաղրում եմ միայն:

ՀԵՆՐԻԿ. Գէորգի դիմաց չը կարմրելու, նրան ուղիղ նա-  
յելու համար. կարևոր է այդ.

ՆԻՆԱ. Ես ոչինչ լսել չեմ ուզում: (Կամենում է զնալ):

ՀԵՆՐԻԿ. (Առաջ քայլելով): Խոհեմ եղէք, օրիորդ Նինա:

ՆԻՆԱ. Ես ձեզ տեսնել չեմ կամենում. հեռու գնացէք,

ինչո՞ւ ինձ հանգիստ չէք տալիս:

ՀԵՆՐԻԿ. Ձեր հանգստութիւնը ես չեմ բռնաբարում:

ՆԻՆԱ. Բռնաբարում, աւազակի պէս բռնաբարում:

ՀԵՆՐԻԿ. Օրիորդ !

ՆԻՆԱ. Դուք խել էք իմ հանգստութիւնը—

ՀԵՆՐԻԿ. Օրիորդ !

ՆԻՆԱ. Ես ձեզ չեմ ուզում տեսնել: Թողէք ինձ հանգիստ:

ԳԷՈՐԳ. (Մտնում է. Նինային): Եկայ խնդրելու քեզ...

Այս Թնչ է: (Շայտում է երկուսին տարակուսական):

ՆԻՆԱ. (Հենրիկին): Ի՞նչ էք ուզում այլ ևս ինձնից. ին-  
չո՞ւ ինձ հանգիստ չէք տալիս:

ԳԷՈՐԳ. Չեմ հասկանում...

ՀԵՆՐԻԿ. Ներքեք, օրիորդ, եթէ այդ ձեզ անհանգստութիւն  
է պատճառում, կադատեմ շուտով ձեզ այդ դրութիւնից, ինձ  
վրայ յանձն առնելով այդ պարտականութիւնը: (Գէորգին):  
բարեկամ...—

ԳԷՈՐԳ. Բայց Թնչ կայ որ:

ՆԻՆԱ. Ստեք, կեղծիքներ. անազնիւ մարդիկ: (Ծընսը  
սեղմում է զահաւորակին: Մտնում է Լիոնորան: Քիչ յետոյ  
սկսում են հաւաքուել հիւրեր):

ՀԵՆՐԻԿ. (Գէորգին): Ներիր, ընկեր. այս տեսարանին ես  
ակամայից միայն նպաստել եմ: Լսելով օրիորդի քեզ տուած  
համաձայնութեան մասին, ես, յանուն քեզ տաճած իմ մտեր-  
մութեան, յանուն մեր բարեկամութեան, չուզեցի մեր մէջ ոչ  
մի կեղծիք կամ դադտնիք ունենալ, ճիշտ այն իմաստով, որի  
մասին քիչ առաջ խօսեալ էինք. ուստի և կարևոր համարեցի  
խնդրել օրիորդ Նինային, պատմել քեզ այն յարաբերութեան  
մասին, որ սիրոյ անուան տակ, ունեցել է նա ինձ հետ այս  
մի շարաթուայ ընթացքում: Այդ մի խաբուսիկ շրջան էր ինձ  
համար, որին վերջ դրի ես երեկ, և որը կամենում էի անա  
քեզ պատմել, կեղծ դրութիւնից ազատելու թէ ինձ, թէ օրիոր-  
դին և թէ քեզ:

ԳԷՈՐԳ. Այդ ամենի համար պէտք է միայն շնորհակալ

լինել. ինչի՞ համար են ուրեմն քո այս ամեն ջղաձգութիւնները, Նինա:

ՆինԱ. Ես չեմ ուզում այլ ևս ոչ ոքի տեսնել:

ԳէՈՐԳ. Հանգստացիր, Նինա. այստեղ ոչինչ չարիք չը կայ, ընդհակառակը պիտի շնորհապարտ մնալ իրերի պարզ դրութեան համար: Դու չը պիտի խուսափէիր այդ քայլից, որ քեզ աւելի կը բարձրացնէր: Մեր կապը ոչ թէ անցեալի, այն ապագայի համար է, ուստի և վստահօրէն կարող ենք մաքրուել անցեալից, ապագայ անդորրութեան նպաստելով: Տո՛ւր ինձ ձեռք:

ԼԵՒՈՆ. (Մտել է քիչ առաջ Գէորգի խօսակցութեան ժամանակ): Ներեցէ՛ք, պարոններ. թերեւ անպատեհ ժամանակ մօայ, սակայն իմ ներկայութիւնը մանաւանդ՝ այս տեսարանին աւելի քան կարեւոր է: Իմանալով օրիորդ Նինայի պարոն Գէորգին տուած համաձայնութեան մասին, խիստ զարմացայ այն տարօրինակ իրողութեան դիմաց, որ մի շաբթում ընդամենը, օրիորդ Նինան կարողանում է մերժել ինձ, ընդունել բժշկին, ապա նշանուել Գէորգի հետ. ընդամենը մի շաբթում, ասում եմ ձեզ: Ես իրաւունք ունէի կասկածելու, որ այս ամենի մէջ միմիայն հաշիւներ են դեր խաղում և ոչ մաքուր սէր, ուստի և եկայ պարզելու այդ ամենը հենց յանուն օրիորդ Նինայի, մի էակ, որ իմ սրտին անչափ մօտ էր կանգնած և որի բախտաւորութիւնը միշտ թանգ է ինձ:

ՆինԱ. Ձեր այդ տօնը ամենեկին սիրոյ հոտ չէ բուրում և ես ձեզ արգելում եմ խօսել իմ սիրոյ մասին:

ԳէՈՐԳ. Նինա, դու անարդար ես:

ԼԵՒՈՆ. Ես սիրում էի օրիորդին. սիրում ամենամաքուր ու գիտակից զգացմունքով, հաւատացած նրա փոխադարձ սիրուն. գոնէ այդպէս էին վկայում նրա անձնուէր հոգատարութիւնը, նրա հառաչներն ու արցունքները, նրա բորբոք յոյզերը. Սակայն մի պայծառ օր կայծակ խիեց իմ կեանքին: Հա՛րազատ ականջներովս լսեցի նրանից, որ այդ ամենը միմիայն ամառային պօլէզիւս է եղել, միայն պարապ ժամերի հաճելի վատնումն: Մի խաղ միայն, մի ննգխաղ, որ հրճուանք պատճառելով մի դեռատի կոյսի, ամայի դարձրաւ իմ երիտասարդ կեանքը, սպանեց իմ թարմ զգացմունքը: Իրաւունք չունիմ միթէ՛ այժմ այս դերում ներկայանալու այստեղ, պարոններ: Յի՛րաւի՛ ես անազնիւ եմ վարւում:

ՀԵՆՐԻԿ. Ամենաազնիւ վարք: Դուք աւելի իրաւունք ունիք: Նրա սիրոյ խաղը ինձ հետ՝ թունալից չէր ինձ համար,

ընդհակառակը կրթիչ, այն ինչ ձեզ համար այդ սէրը կրկնակի տանջանք է եղել: Այդ ամենը դիտէք ինչպէս էր բացատրում նա ինձ, որ Լևոնը մի անտանելի ծանօթ է իր համար, որի լուսանկարը արժէ անգամ պատռել:

ԼԵՒՈՆ. Մի անտանելի ծանօթ:

ՆԻՆԱ. Այն օրերին, այս: Ուրիշ Բնչ կարող էր իմ մէջ մնացած լինել:

ԼԵՒՈՆ. Համակրանք դէպ այն անձը, որին այնքան բորբոք անձնատուր էիք: Այժմ ինձ կրկնակի պարզ է, Նինա, որ դու ինձ չես սիրել, դրա հետ հանդերձ և այն, որ դու անընդունակ ես խոր ու գիտակից սիրելու: Դու վտանգաւոր կի՛ն ես: Եթէ անընդունակ ես չնչին յարգանք տածել անցեալին, չես կարող ուրեմն և հաւատարիմ ու պարտաճանաչ լինել ներկայում: Դու վտանգաւոր կի՛ն ես, ասում եմ քեզ: Քո անցեալը, գիմնադրական կեանքը, որ այժմ աւելի լաւ ծանօթ է ինձ, պարզ ձայնում են վարքդ ու որոշում ապագադ: Քեզ վտանգ է սպառնում, եթէ ժամանակին չը սթափուես, որի համար և ահա եկել, ամեն ինչ պարզել եմ յանդգնում: Դու թողեցիր ինձ ու ընտրեցիր Հենրիկին, ապահով դրութիւնը նկատի առնելով այժմ մերժած Հենրիկին յարուել ես Գէորգին, դրամական առաւելութիւնների պատճառով: Խոստովանուիր, որ այդպէս է, խոստովանուիր, որ այս ամենի մէջ սիրոյ զգացմունքով չես առաջնորդուել: Խոստովանուիր, թէկուզ հենց այդ ճանապարհով փրկելու պատիւդ:

ՆԻՆԱ. (Անելի ամուր է սեղմում զահաւորակին ու լալիս: Լիոնորա եւ մի քրկու հիւրեր կամենում են մխիթարել նրան):

ՀԵՆՐԻԿ. Թողէք լալ, հանգիստ լալ: Այդ արցունքները մաքուր զգացմունքից են բղխում, իբրև սթափման առհաւատ չեայ և սփոփիչ կը լինեն: Նա զոհ է իր կրթութեան ու դաստիարակութեան, որ հիմնուած է շրջապատի ուշադրութեան: արժանանալու ուսման մէջ: Նա ներազդուել ու շարունակ մնուել է գեղեցիկ զարդ, հրապուրիչ իր լինելու: Նա այդպէս է անցրել իր պատանեկութիւնը, իսկ այժմ աւելի ազդեցիկ լինելու նպատակով, նա ձգտում է կոմիորտ ու պատրաստ կեանքի: Սակայն հարստութեան հետ շաղկապուած ախտերը թունալից կը լինեն նրա թոյլ բնատրութեան համար, եթէ Գէորգն արթուն հսկող չը լինի նրա վրայ:

ԳԻՈՐԳ. Սթափուիւր, Նինա և յայտնիւր քո շնորհակալու-  
թիւնը այս ամենի համար: Հաւատացիւր, որ այդ բոլորը կը  
բռնկուէին մի օր հենց քո հարազատ գլխին, այն ինչ այժմ  
սկիզբ է դնում նոր կեանքի:

ՆԻՆԱ. Վեր է կենում դիտում շրջապատը, ծանրու-  
թեամբ մերձենում զրասեղանին): Լևոն, իմ հասցէին այդպէս  
նախատական հնչող քո ձայնը վերջին անգամ պարզ ցուց-  
նում է այն անկեղծ սէրը, որ տածում ես դու ինձ, իմ ձըգ-  
տումները չեն համապատասխանում քո պայմաններին, ուստի  
և ճնշում է իմ զգացմունքը, ներքի ինձ, բայց և իմացիւր որ ես  
քեզ, միմիայն քեզ եմ սիրում:

ԼԵՒՈՆ. Իմ վիրաւոր մտքի համար սպեղանի է այդ լսել,  
սակայն դժբախտաբար մեր ճանապարհները բաժան են այլ ևս:

ՆԻՆԱ. Հանգիստ մնա, ազնիւ մարդ: Ես այդ ասում եմ  
միայն իմ վերջին ու անկեղծ զգացմունքը արտայայտելու: Իմ  
այս պայծառ գիտակցութեան համար ամուսնութիւնը աւելի  
քան անմատչելի է: Կեանքում թող ապրեն զրական մարդիկ,  
իսկ ես սթափուելու այլ միջոց ունեմ: (Արագութեամբ քա-  
շում է արկղը, վերցնում ատրճանակը ու պարպում ճակա-  
տին: Շարժում ու աղմուկ: Մի քանի պտոյտներից, Նինան  
ընկնում է գահաւորակին):

ՀԵՆՐԻԿ. Ուղիղ գանգի մէջ:

ԳԻՈՐԳ. Թշուառ էակ:

Յ. ԲՈԶԵԱՆ

(ՎԱՐԱԳՈՅՐ)